



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ                   ՏՀՏ-ի կիրառումը <<Տեխնոլոգիա>> առարկայի դասերին  
ԱՌԱՐԿԱ               Տեխնոլոգիա  
ՀԵՂԻՆԱԿ              Ապի Գրիգորյան           9/13  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ      Սեմյոնովկայի հիմնական դպրոց  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

## Բովանդակություն

Ներածություն.....	3
Արդիականությունը.....	6
Գլուխ 1. ՏՀՏ կիրառումն ուսուցման գործընթացում.....	6
Գլուխ 2. ՏՀՏ- ների կիրառությունը «տեխնոլոգիա» առարկայի դասավանդման գործընթացում.....	8
Գլուխ 3. Փայտի գեղարվեստական մշակումը.....	9
Եզրակացություն.....	14
Օգտագործված գրականության ցանկ.....	15
Հավելված.....	16

## Ներածություն

Տեխնոլոգիան գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար:

«Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր:

«Տեխնոլոգիա» առարկան, որպես դպրոցականների մասնագիտական կողմնորոշման ու ժամանակակից տեխնոլոգիաների հիմունքների ուսուցման առարկա, կորցրել է իր առաջվա նշանակությունը: Հակառակ այս իրավիճակին տեղեկատվական տեխնոլոգիաները իրենք են գալիս աշակերտներին և ուսուցիչներին օգնության:

<<Տեխնոլոգիա>> կրթական ոլորտը ընդհանուր կրթության բաղկացուցիչ մասն է, որը սովորողներին զինում է անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական գիտելիքներով, ունակություններով ու հմտություններով, և առանց դրանց անհնար է դաստիարակել աշխատասեր, ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացին տիրապետող, մասնագիտորեն ինքնակողմնորոշված անձ:

Այն ներկայացնում է ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական բաղադրիչները՝ նպատակը, բովանդակությունը, մեթոդներն ու միջոցները և կազմակերպումը:

Դասի արդյունավետությունն էապես պայմանավորված է նշված բաղադրիչների ճշգրիտ ներառումից և նպատակահարմար համադրումից:

### **Հետազոտության խնդիրները**

- Ուսումնասիրել և բացահայտել <<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցման գործընթացի առանձնահատկությունները տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները:
- Բացահայտել էլեկտրոնային ուսուցման ժամանակակից համակարգերի կիրառման առանձնահատկությունները և հիմնավորել առկա ծրագրային համալիրների կիրառման արդյունավետությունը:

### **Նպատակը**

- Բարձրացնել սովորողների մտածողության մակարդակը
- Ապահովել որակական ավելի բարձր մակարդակ, խնդիրները լուծել բազմազան եղանակներով,
- Ձևավորել ապագա մասնագետի ակտիվ, ստեղծագործական անհատականության, որն ունակ է ինքնուրույն կառուցել և հարմարացնել իր կրթական և ճանաչողական գործունեությանը
- Ուսուցման գործընթացը դարձնել բազմաբնույթ ինչպես նաև նպաստել անձի զարգացմանը, ճանաչողական ակտիվության և ստեղծագործական կարողությունների ձևավորմանը:

### **Ակնկալվող արդյունքներ**

#### **Սովորողները կիմանան՝**

- Ինքնուրույն մտածողության՝ փորագրության տարբեր տեսակների օգտագործման միջոցով
- Դեկորատիվ կիրառական առարկաների պատրաստում
- Համապատասխան զարդանախշերի օգտագործումը համապատասխան նյութի վրա

## **Կլարոդանա՝**

- իրականացնել դեկորատիվ կիրառական արվեստի և ժողովրդական գեղարվեստական արհեստների ստեղծագործությունների պատրաստման համար նախապատրաստական նյութի նպատակային ընտրության և վերլուծության, գեղարվեստական և կերպարվեստային միջոցների ընտրության ստեղծագործական խնդրի հորինվածքի վրա հետևողական աշխատանքին համապատասխան
- տեխնիկական հմուտ կերպով կատարել նախանկարներ բնական ձևերի ստեղծագործական այլ նյութերի մշակման հիման վրա
- մշակել ստեղծագործությունների հորինվածքները դեկորատիվ-կիրառական արվեստի և ժողովրդական գեղարվեստական արհեստների ավանդույթների ժամանակակից պահանջների հիման վրա
- կիրառել գիտելիքներն ու հմտությունները ազգային նմուշների կրկնօրինակման, դրանց տարբերակային կտարման դեկորատիվ-կիրառական արվեստի և ժողովրդական գեղարվեստական արհեստների ստեղծագործությունների՝ ըստ սեփական հորինվածքի կատարման գործընթացում

## **Տիրապետի՝**

- փայտի գեղարվեստական փորագրության տեսակներին ազգային զարդամոտիվների հիման վրա էսքիզների կատարմանը
- նյութաբանության հատուկ տեխնոլոգիայի և կատարողական վարպետության վրա հիմնված մասնագիտական տեխնոլոգիաներին

## ***Արդիականությունը***

<<Տեխնոլոգիայի>> ուսուցման գործընթացում առավել արդյունավետ է համակարգիչն օգտագործել նոր նյութի հաղորդման ժամանակ՝ գործիքների, սարքավորումների, նյութերի կառուցվածքի ու օգտագործման ձևերի, աշխատանքային հնարավորությունների մասին բացատրությունը զուգակցելով տեսողական նյութերի ցուցադրությամբ: Ստացած տեղեկությունների ամրապնդման նպատակով աշակերտներին կարելի է առաջադրել էլեկտրոնային թեստեր: Դրանք կարող են լինել պարզ (քարտեր հարցերով, պատասխանների տարբերակներով) կամ բարդ՝ բազմաստիճան:

Պատասխանելով հարցերի՝ աշակերտները միաժամանակ կրկնում են նաև տեսական նյութը և ստուգում այն գործնականում:

Տեխնոլոգիայի դասաժամերին համակարգիչների և այլ տեխնիկական միջոցների կիրառումը հնարավորություն է տալիս կազմակերպել տեսաֆիլմերի դիտումներ՝ պրոեկտորներով, ստեղծել վիդեոդասեր և էլեկտրոնային թեստեր:

## **ԳԼՈՒԽ 1. ՏՀՏ ԿԻՐԱՌՈՒՄՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ**

Մարդկության զարգացման պատմության մեջ երբևէ չեն եղել փոփոխությունների ավելի հզոր խթան, քան տեխնոլոգիաները: Տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ՝ մարդկանց ապրելակերպը, սնվելու ձևը, տեղափոխելու միջոցները, հաղորդակցման ձևերը և անգամ մտածելակերպը: 21-րդ դարը տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (այսուհետև՝ ՏՀՏ-ների) դարաշրջան է, որոնց սրընթաց զարգացումն ամբողջ աշխարհում նոր պահանջներ է դրել կրթական համակարգերի առջև:

Երեխաները շատ վաղ, դեռևս նախադպրոցական տարիքից ընկղմվում են ՏՀՏ-ների աշխարհը: Հեռախոս, պլանշետ, համակարգիչ, սմարթֆոն, ինտերնետ և այլն դառնում են նրանց առօրյայի անբաժան մասը, գերող իրականությունը, հետաքրքրություններից ամենահետաքրքիրը: Դպրոցն իր ավանդական միջավայրով, տպագիր գրքերը, տետրերը, թուղթն ու գրիչը արդեն չեն համապատասխանում երեխաների իրական հետաքրքրություններին ու ձգտումներին: Ուստի, ներկա աշխարհում ՏՀՏ-ները դարձել

են արդիական կրթության հրամայականը և ուսուցման նոր գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք օգնում են աշակերտներին խորացնել ուսուցանող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների ավելի ընդգրկուն ընկալման, ստանալ ավելի բազմազան և շատ դեպքերում անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան տեղեկատվություն, կիրառել ժամանակակից գնահատման, ինքնագնահատման և ուսուցման մեթոդները: ՏՀՏ-ները հնարավորություն են ընձեռնում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքների ձեռքբերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոխելով հին մոտեցումներն ու ուսուցման մեթոդները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ:

Մեր օրերում համացանցային կրթական կայքերը և կրթական էլեկտրոնային ռեսուրսներն արդյունավետ ուսումնաօժանդակ գործիքներ են, որոնք նպաստում են ուսուցչի աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ- ների հմտությունների զարգացմանը և բարձրացնում աշակերտների առաջադիմությունը, հետաքրքրվածությունը ու մոտիվացիան: Դրանք նպաստում են նաև աշակերտներին ուսումնական գործընթացում ակտիվորեն ընդգրկելուն, քանի որ թույլ են տալիս ուսուցչին և աշակերտին հազորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»: Ժամանակակից կրթական համակարգը, հիմնվելով ուսուցչի կողմից իրագործվող ուսումնական գործընթացի կառավարման և տեղեկատվության ավանդական աղբյուրների վրա (ուսուցիչ, դասագիրք, ուսումնական ձեռնարկներ), պահանջում է ընդլայնել տեղեկատվության դաշտը: Մակայն այս համակարգը ի տարբերություն դիդակտիկական այլ համակարգերի, ուսուցման այնպիսի մեթոդների ու տեխնոլոգիաների կարիք է զգում, որոնք համարժեք լինեն ուսուցման անձնակենտրոն մոտոցման պահանջներին: ՏՀՏ տեխնոլոգիաների ներդրումը հնարավոր չէ պատկերացնել առանց ուսուցման նորարարական մեթոդների և ռազմավարությունների, առանց նոր ուսումնական միջավայրի ստեղծման, որը

համարժեք կլինի ուսուցման անձնակենտրոն մոտեցման պահանջներին: Կրթության համակարգ ինտեգրվող տեղեկատվական, հեռահաղորդակցման նոր տեխնոլոգիաները պետք է համապատասխանեցվեն մանկավարժության, հոգեբանության և այլ հումանիտար գիտությունների գլխավոր մարդաբանական, անձնակենտրոն ուղղվածությանը:

Այսինքն, ուշադրության կենտրոնում պետք է լինի աշակերտի անձը և նրա ուսումնառությունը: Իսկ «ուսումնառություն» տվյալ դեպքում նշանակում է ճանաչողական գործունեության ծավալում:

## **ԳԼՈՒԽ 2 . ՏՀՏ- ՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Ուսուցման ակտիվ մեթոդների զարգացումը և կրթական համակարգի կատարելագործումն անհնար է պատկերացնել առանց ուսման մեջ նոր մանկավարժական և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման, որոնք կոչված են առավել ակտիվորեն նպաստելու սովորողների մտավոր, ստեղծագործական, բարոյական և հուզական զգացումներին: Խոսքը նախ և առաջ կրթության բնագավառում համակարգչի և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման մասին է, որոնց շնորհիվ կարող է ստեղծվել ուսումնական-ճանաչողական մի այնպիսի միջավայր, որը կնպաստի ինչպես անհատական, այնպես էլ խմբային ու զանգվածային ուսուցման տարբեր խնդիրների լուծման: Այսօր գլխավորն անհրաժեշտ տեղեկատվություն ինքնուրույն ձեռք բերելու, հիմնախնդիրները տեսնելու և դրանց լուծման ճանապարհները գտնելու, ստացած գիտելիքները քննադատաբար վերլուծելու և դրանք նորանոր խնդիրների լուծման համար կիրառելու կարողությունն է: Պատրաստի գիտելիքների յուրացումն ու ընդհանրացումը դառնում են ոչ թե մարդու մտավոր զարգացման նպատակը, այլ այդ զարգացմանը նպաստող օժանդակ միջոցներից մեկը: Ներկա ժամանակներում անշուշտ փոխվել են կրթությանը ներկայացվող պահանջները, բազային գիտելիքներից և նոր գիտելիքների ձեռքբերումներից բացի ժամանակակից աշխատողը պետք է կարողանա նաև արդյունավետ կիրառել տեղեկատվական



աղբյուրներն ու պաշարները: Այսօր նրանցից պահանջվում է ստեղծագործական մտածողություն, որոշումներ կայացնելու և ողջ կյանքում սովորելու կարողություն: ՏՀՏ-ի օգտագործումը տեխնոլոգիայի դասերին հնարավորություն է տալիս ձևափոխել աշխատանքի ձևերը, սովորողների գործունեությունը, ակտիվացնել ուշադրությունը և մեծացնել անհատի ստեղծագործական ներուժը: Համակարգչային ծրագրերով ստեղծված դիդակտիկ նյութերը, գծագրերը, տեսանյութերը և այլնի օգտագործումը հետաքրքրություն են առաջացնում դասի նկատմամբ, այն դարձնում հետաքրքիր: Տեխնոլոգիայի դասերին ՏՀՏ-ի կիրառումը հատկապես կարևոր է նրանով, որ ծանոթացումը տարբեր տեխնոլոգիական գործընթացների հետ կարելի է սկսել տեսանյութի դիտումով: Դա հասկանալի կդարձնի աշակերտների համար տեխնոլոգիական ողջ գործընթացը:

Ժամանակակից ուսուցիչը առաջին հերթին առաջարկում է պայմաններ ստեղծել ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Դպրոցական դասը մանկավարժական գաղափարների և մանկավարժական ստեղծագործության մարմնավորման վայր է: Հենց դասարանում է իրականացվում ուսուցչի հիմնական գործառույթներից մեկը՝ փոխանցել, տալ, սովորեցնել:

«Տեխնոլոգիա» առարկայի տարբեր բաժինների դասավանդման համար կարելի է ընտրել և կիրառել համապատասխան ծրագրային փաթեթներ, որոնք տվյալ նյութը կդարձնեն ավելի ակնառու:

### **ԳԼՈՒԽ 3. ՓԱՅՏԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ**

Փայտի գեղարվեստական մշակումը իր ուրույն տեղն ունի մարդկության պատմության մեջ այդ են վկայում ճարտարապետական և դեկորատիվ - կիրառական արվեստից մեզ հասած բազմաբնույթ գեղարվեստական արժեքները ներկայացնող բազմաթիվ նմուշները, որոնք աչքի են ընկնում իրենց ազգային բնորոշ առանձնահատկություններով, կատարման բազմաբնույթ ձևով:

Փայտի գեղարվեստական մշակման զարգացումը սերտորեն կապված է տարբեր դարաշրջաններում ապրած հասարակարգերի գեղարվեստական, հոգևոր պահաջների

հետ, իր մեջ ներառելով տեղական ազգային, էթնիկ բնույթին հատուկ տարբեր ավանդույթներ:

Հաշվի առնելով աճող սերնդի նախամասնագիտական գիտելիքների դասավանդման արդի պահանջները , հանրակրթական ավագ դպրոցներում առանձնահատուկ տեղ է հատկացվում նաև ազգային գեղարվեստական դասավանդանը:

Մեծ տեղ է հատկացվում սովորողների մասնագիտական գիտելիքների,աշխատանքային հմտությունների, ստեղծագործական ունակությունների զարգացման հարցերին:

Ծրագրային թեմաների նպատակասլաց հաջորդականությունը նպաստում է սովորողների ինքնուրույն մտածողությանը, գեղարվեստական ճաշակի ձևավորմանը և ստեղծագործական ունակությունների բացահայտմանը:

Մեղիա ռեուսները տեխնոլոգիայի ուսուցչին կարող են օգնել նաև տարբեր արտադրական գործընթացների, մշակման եղանակների, գործիքների, հաստոցների մասին տեղեկություններ հաղորդելիս:

Համացանցում կան բազմաթիվ ուսումնական նյութեր, փայտամշակման, մետաղամշակման, հագուստի պատրաստման, սննդի պատրաստման և այլնի մասին:

6-րդ դասարանի <<Տեխնոլոգիա>> առարկայի դասավանդման ընթացքում հատկացվում է 6 ժամ <<Փայտի գեղարվեստական մշակումը>> թեմային:

Այդ ժամերի ընթացքում աշակերտը պետք է ծանոթ լինի փայտի գեղարվեստական մշակման պատմությանը, իմանա, որ այդ մշակույթը սերտորեն շաղկապված է հայ ժողովրդի կենցաղի, արհեստների, կիրառական արվեստի տարբեր ճյուղերի հետ:

Փայտից պատրաստել են զանազան կենցաղային իրեր, զրակալներ,մոմակալներ,օրորցներ,մահճակալներ, աթոռներ և այլն:

Ծանոթ լինի փորագրության գործիքներին, աշխատատեղին,փորագրման տեսակներին և վերջնամշակմանը:

Վերջին տարիներին դպրոցի նյութատեխնիկական բազայի փոփոխության պատճառով<<Տեխնոլոգիա>> առարկան,որպես դպրոցականների մասնագիտական կողմնորոշման ու ժամանակակից տեխնոլոգիաների հիմունքների ուսուցման առարկա,

կորցրել է իր նախկին նշանակությունը: Հակառակ այս իրավիճակին ՏՀՏ-ները իրենք են գալիս աշակերտին և ուսուցչին օգնության:

*Դասի պլան-կոնսպեկտ*

*Դասի թեման-Եզրագծային և հարթ ռելեֆային փորագրություն*

*Դասի տիպը-համակցված*

### **Դասի նպատակը՝**

- ամրապնդել գիտելիքները փայտի գեղարվեստական մշակման մասին
- ծանոթացնել եզրագծային փորագրության եղանակներին և առանձնահատկություններին
- սովորեցնել կատարել պարզագույն եզրագծային փորագրություն

### **Դասի խնդիրները՝**

*Ուսուցանող*-աշակերտների մեջ ցանկություն առաջացնել իմանալու փայտի գեղարվեստական մշակման մասին, ձևավորել ձեռնարկատիրական գիտելիքները որպես աշխատանքային գործունեության տեսակ

*Զարգացնող*-աշակերտների մոտ ձևավորել հետաքրքիր նախագծեր մտածելու, հորինելու, ստեղծագործական աշխատանքների կատարման ժամանակ ունակություններ և հմտություններ զարգացնելու, ինչպես նաև ինքնուրույն աշխատելու կարողություն:

*Դաստիարակող*- ձևավորել համագործակցային ուսուցում, կարգապահություն, ընկերասիրություն, խնայողաբար վերաբերվել բնական ռեսուրսներին:

*Դասի անցկացման մեթոդներ*-մտազրոհ, ելքի քարտ:

*Դասի կահավորումը*-համակարգիչ, պրոյեկտոր, ձևանմուշ, մատիտ, դրվագրիչներ, փայտանյութ, դազգահ:

*Միջառայկայական կապ*- մաթեմատիկա, ինֆորմատիկա, կերպարվեստ, բնագիտություն:

### *Դասի ընթացքը*

- *Կազմակերպչական մաս-հաճախումների հաշվառում*
- *Հին նյութի ստուգում և ամփոփում*

*ա) Փայտի գեղարվեստական փորագրության ինչ ձևեր գիտեք*

*բ) Որո՞նք են երկրաչափական փորագրության տարերը*

*գ) Ինչպե՞ս է կատարվում նախապատրաստվածքի չափանշումը*

*դ) Ի՞նչ գործիքներից են օգտվում երկրաչափական փորագրություն կատարելիս:*

### **Նոր նյութի հաղորդում**

Եզրագծային փորագրությունը երկրաչափական փորագրության տեսակներից է.

Կատարման տեխնիկայով այն ամենապարզն է.

Եզրագծային փորագրությանը բնորոշ են նկարի եզրագծով կատարված ոչ խորը երկնիստ փորվածքները, ինչպես նաև ուղիղ կամ կոր գծերի, շրջանագծերի, երկրաչափական պատկերների տեսքով փորվածքները:

Հիմնականում փորագրում են կենդանիների, թռչունների պատկերներ, ծաղիկներ, տերևներ և այլն:

Նախապատրաստվածքն ընտրելուց հետո անհրաժեշտ է մշակել փորագրվող մակերևույթը:

Այն պետք է լինի հարթ, բնական տեսքով կամ լաքապատված:

Ելնելով նկարի բարդությունից, եզրագծային փորագրության ժամանակ օգտագործում են տարբեր շեղակներ, կտրիչներ, կիսակլոր և անկյունակ դուրեր, թեք գլխիկներով դուրեր:

Փորագրությունը կատարվում է հետևյալ փուլերով՝

1. ընտրել փայտանյութը
2. ընտրել գործիքները և հարմարանքները
3. նկարի փոխանցում փայտի վրա(ձևանմուշով կամ պատճենահան թղթով)
4. մշակել փորագրվող մակերևույթը
5. զարդաքանդակի վերջնամշակում

### Ներածական հրահանգավորում

- Տեսադասի միջոցով նմուշների ցուցադրում և շինվածքի պատրաստման գործընթացի վերլուծություն:
- Աշխատանքային շարժումների ցուցադրում (ինչպես բռնել շեղակը, ինչպես մակակտրել փայտը):
- Աշխատանքի անվտանգության կանոնների հիշեցում:

### Ընթացիկ հրահանգավորում

Աշակերտների ինքնուրույն աշխատանք: Աշխատանքի ժամանակ կատարել նպատակային շրջումներ:

1. Ստուգել աշխատատեղի կազմակերպումը և անվտանգության կանոնների պահպանումը
2. Ստուգել աշխատանքային հնարների կատարման ճշտությունը, տեխնոլոգիական գործընթացի հաջորդականությունը
3. Անհրաժեշտության դեպքում կատարել անհատական կամ խմբային ցուցումներ:

### Եզրափակիչ հրահանգավորում

- կատարված աշխատանքների ցուցադրում
- թերությունների և սխալների վերլուծություն
- գնահատում

Աշխատատեղի մաքրում և կարգաբերում:

Արդի կրթական համակարգի ներկա բարեփոխումները պահանջում են այնպիսի կրթական բովանդակության ու սովորողների պատրաստվածության մակարդակ, որպեսզի դասավանդող նոր սերունդը կարողանա ազատ տիրապետի արդի մեթոդներին և տեղեկատվական նոր տեխնոլոգիաներին: Ներկա սերունդը աչքի է ընկնում իր զարացման մակարդակով և տեղեկատվական նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև հեռահաղորդակցական կապուղիների նկատմամբ ունեցած իր բավականին մեծ հետաքրքրասիրությամբ:

## Եզրակացություն

Այսպիսով համակարգիչների և այլ տեխնիկական միջոցների օգտագործման անհրաժեշտությունը <<Տեխնոլոգիա>> առարկան դասավանդելիս պայմանավորված է երկու հիմնական, իրար շաղկապված պատճառներով:

Առաջին՝ համակարգչի տեխնիկա-գործառնական հսկայական հնարավորությունները, ի տարբերություն նախկինում օգտագործվող տեխնիկական միջոցների, անհամեմատ ավելի մատչելի են դարձնում ուսումնական նյութի, տեսանյութերի ուսումնասիրումը, որն անհրաժեշտ է ուսումնադաստիրակաչական գործընթացը կազմակերպելու համար: Երկրորդ՝ գիտատեխնիկական առաջընթացի ապահովումը էապես կախված է ժամանակի պահանջները բավարարող (համակարգչի իմացություն և կիրառում) մասնագետների պատրաստվածությունից:

Կատարելով այս հետազոտական աշխատանքը գալիս ենք հետևյալ եզրակացությանը, որ ՏՀՏ-ի տեսական գիտելիքները և գործնական հմտությունները տեխնոլոգիայի դասերի պատրաստման և անցկացման հարցում ուսուցչին թույլ են տալիս.

- բարձրացնել հետաքրքրությունը առարկայի նկատմամբ,
- դասը դարձնել ժամանակակից և մատչելի սովորողների կողմից նյութը յուրացնելու համար,
- պատկերավոր և հասկանալի ներկայացնել բարդ տեխնոլոգիական գործընթացները,
- սովորողի և ուսուցչի միջև հաստատել փոխըմբռնման և փոխօգնության հարաբերություններ,
- բարելավել ուսուցչի մասնագիտական և մանկավարժական կարողությունները:

Հետևաբար, ուսումնական գործընթացում համակարգչի ուսուցումը և կիրառումը հանդիսանում է սովորողների հետագա աշխատանքային գործունեության կարևորագույն բաղադրիչ, քանի որ մասնագիտությունների զգալի մասը սերտորեն կապված է համակարգչի հետ:

## Հավելված

Կայքի օգնությամբ ստեղծել եմ թեստային աշխատանք

[https://learningapps.org/create?new=301&fbclid=IwAR0fMYG54l2L3RDHtETZP\\_FStEBhkYKOr8](https://learningapps.org/create?new=301&fbclid=IwAR0fMYG54l2L3RDHtETZP_FStEBhkYKOr8)

Փայտի գեղարվեստական մշակում

Որը փայտի գեղարվեստական փորագրության տեսակ չէ

A եզրագծային      B ցանցկեն

C երկրաչափական      D խորհանարդած

Փայտի գեղարվեստական մշակում

Որը երկրաչափական փորագրության տարր չէ

A բուրգի փովածք      B եռանիստ փովածք

C քառանիստ փովածք      D երկնիստ փովածք

Փայտի գեղարվեստական մշակում

Որը փորագրման գործիք չէ

A դրվագրիչներ      B շեղակ

C գդալածն. դանակ      D մատնոց

Փայտի գեղարվեստական մշակում

Փորագրվող մակերևույթները լինում են՝  
(նշել սխալ պատասխանը)

A ուռուցիկ      B երկար

C գոգավոր      D ուղիղ

## Օգտագործված գրականության ցանկ

1. «Տեխնոլոգիա» առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, 2020թ.
2. «Տեխնոլոգիա» առարկայի 6-րդ դասարանի դասագիրք
3. Ասատրյան Ս.Ս., Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ապագա մասնագետի մասնագիտական պատրաստության գործընթացի կազմակերպման մի քանի մոտեցումներ, Վանաձոր, «Մխիթար Գոշ» թիվ 1, 2009թ.
4. Վարդանյան Ս., Տեղեկատվական ծրագրերը հանրակրթության բնագավառում, Մարդ և հասարակություն, 3-4, 2005թ.
5. <https://fliphtml5.com/fumf/wmzs>
6. <https://kayabaparts.ru/hy/rezba-po-derevu-dlya-nachinayushchih-instrumenty-master-klass-sovety/>
7. <https://podarilove.ru/hy/reznye-risunki-po-derevu-hudozhestvennaya-rezba-po-derevu-dlya/>
8. <https://fliphtml5.com/fumf/wmzs>